ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 50-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 13-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աբովյան համայնքի ավագանու հերթական թիվ 13-րդ նիստի օրակարգը՝

1. Աբովյան համայնքի վարչական բյուջեի ծախսային մասում փոփոխություն կատարելու մասին:

2. Գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

3. Աբովյան համայքում 2018 թ-ին « Տեղական տուրքեր և վճարներ » սահմանելու մասին:

4. Աբովյան համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակի,հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 51-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով.

համայնքի ավագանին որոշում է՝

11.01.02.51 գործառնական դասկարգման վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 710.0 հազ. դրամ պակասեցնել և ուղղվածությունը տալ՝

ա)10.07.01.54 գործառնական դասակարգման սոց. անապահով անձանց աջակցության ծրագրի 4729 հոդվածին նպաստի գումար - 700.0 հազ. դրամ:

բ)01.01.01.51 գործառնական դասկարգման կառավարման ապարատ ծրագրի 4241 հոդվածին - 10.0 հազ. դրամ՝ գազի տեխ պայմանների գումար:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 52-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին » Հայստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով.

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Աբովյան համայնքի համայնքապետարանի և մշակույթի տան գույքի անվանացուցակը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՎԵՏԻՔ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Աբովյան
Համայնքի ավագանու 2017 թվականի
դեկտեմբերի 12-ի թիվ 52-Ա որոշման

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

N	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	հատ	գումարը	տարեթիվ
1.	Տրանսֆորմատոր մեծ	1	115500	1992
2.	Տրանսֆորմատոր փոքր	1	75000	1993
3.	նկար	2	88550	1986
4.	Ակումբի շենք	1	1783551	1947
5.	Բաղնիքի շենք	1	1595630	1972
6.	Վարչական շենք	1	927927	1963
7.	Գրադարանի շենք	1	113537	1962
8.	Կինոյի խցիկ	1	125087	1961
9.	Զրհան կայանի շենք	1	369600	1962
10.	Աղբյուր հուշարձան	1	390760	1947
11.	Մայր առու	3կմ	2875988	1984
12.	Գյուղի գազաֆիկացիա /ստորգետնյա/	8կմ	3075014	1972
13.	Գերեզմանոցի ջրմուղ	400մ	156549	1963
14.	Պարկի դարպասներ	1զույգ	76330	1962
15.	Չհրկիզվող պահարան	1	13282	1963
16.	Գյուղի գազաֆիկացիա օդային	3.7կմ	3500000	2006
17.	Համակարգչային սեղան	1	80000	2006
18.	Գյուղապետարանի ցանկապատ	47մ	254000	2006
19.	Գյուղի գազաֆիկացիա օդային	1կմ	2500000	2007
20.	Ոռոգման գրատար	165մ	2719811	2008
21.	Ծառայողական ավտոմեքենա գազ 31-108	1	4500000	2009
22.	Հուշարձան խաչքար	1	2510120	2010
23.	Պատճենահանման սարք	1	200000	2010
24.	նկար	3	37517	1986
25.	նկար	2	27005	1986
26.	Համակարգիչ և մոնիտոր	1	173000	2013
27.	Համակարգչային աթոռ	1	22000	2013
28.	Գրասենյակային սեղան դիմադիր սեղանով	1	100000	2013
29.	Գրասենյակային աթոռ	1	45000	2013
30.	Շերտավարագույր	20քմ	140000	2013
31.	Աթոռներ /մետաղյա/	12	168000	2013
32.	Համակարգիչ և մոնիտոր	1	170000	2013
33.	Գրասենյակային աթոռ	1	80000	2013
34.	հեռուստացույց	1	380000	2013

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Արովյան
Համայնքի ավագանու 2017 թվականի
դեկտեմբերի 12-ի թիվ 52-Ա որոշման

35.	Էլ. ջեռուցիչ /պառավյի ատապլենիով/	1	25000	2013
36.	օդորակիչ	1	280000	2013
37.	փոշեկուլ	1	30000	2013
38.	Հեռուստացույցի տակդիր	1	60000	2013
39.	Համակարգիչի պրոցեսոր	1	170000	2013
40.	համակարգիչ	1	150000	2013
41.	ալեհավաք	1	50000	2013
42.	Տպիչ քանոն	1	100000	2013
43.	Գրասենյակային աթոռներ	8	200000	2013
44.	զգեստապահարան	1	80000	2013
45.	Ջեռուցման համակարգ	1	644690	2013
46.	Փողոցների զազաֆիկացիա /օդային/	կմ	900000	2013
47.	Դռան ճաղավանդակ	1	50000	2014
48.	Պատուհանների ճաղավանդակ	8	200000	2014
49.	Գրասենյակային աթոռ	1	54000	2014
50.	Հայկական դրոշ	1	60000	2014
51.	Գերեզմանոցի հանգստի քար	1	930000	2014
52.	Փողոցների զազաֆիկացիա /օդային/	կմ	1000000	2015
53.	սառնարան	1	135000	2015
54.	զորգ	1	100000	2015
55.	Գրասենյակային սեղան դիմադիր սեղանով	1	105000	2015
56.	գրապահարան	1	90000	2015
57.	Համայնքային այգի	1	4200000	2015
58.	Մարզագույք	4	260000	2016
59.	Փողոցների զազաֆիկացիա /օդային/	կմ	3300000	2016
60.	Ճոճանակ	1	264000	2016
61.	Նստարան	5	332000	2016
62.	Էլեկտրակ. հեռակառավարման փական	1	375000	2016
63.	սահարան	1	275000	2017
64.	Թենիսի դաշտ	1	162000	2017
65.	Զգեստապահարան	1հատ	70000	2017
66.	Բացզ գեստապահարան	1հատ	20000	2017
67.	Դահլիճի աթոռ	100հատ	1100000	2017
68.	Ամբիոն	1հատ	32000	2017
69.	Բեմի սեղան	1հատ	77000	2017
70.	Գրասեղան	1հատ	47000	2017
71.	Աթոռ փայտից	8հատ	96000	2017
72.	Բազմոց և երկու բազկաթոռներ	1հատ	240000	2017
73.	Բաց զգեստապահարան /մշակույթի տան/	2հատ	28000	2017
74.	Գրապահարան պատի մեջ	1հատ	32000	2017

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Աբովյան
Համայնքի ավագանու 2017 թվականի
դեկտեմբերի 12-ի թիվ 52-Ա որոշման

75.	Խաղասենյակի սեղան	4հատ	112000	2017
76.	Շերտավարագույր	52քմ	234000	2017
77.	Սեղան	10 հատ	160000	2017
78.	Գրապահարան	1 հատ	47000	2017
79.	Տեսախցիկներ	8 հատ	400000	2017
80.	Տոնածառ	1 հատ	120000	2017
81.	Թենիսի սեղան	1 հատ	172000	2017
82.	նարդի	3 հատ	45000	2017
83.	Շախմատ	6 հատ	60000	2017
84.	Պատի շախմատ	1 հատ	50000	2017
85.	Շախմատի ժամ	4 հատ	60000	2017
86.	Աստիճան ալյումինից	1 հատ	75000	2017
87.	Տաքացուցիչ	2 հատ	75000	2017
88.	Օդը հովացնող սարք	4 հատ	236000	2017
89.	Ժամացույց	2 հատ	6200	2017
90.	Երաժշտական կենտրոն	1հատ	379000	2017
91.	Խոսափող	1հատ	26000	2017
92.	Ծառայողական ավտոմեքենա ,,Հունդաի TUCSON,,	1հատ	3875000	2017

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 53-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով.

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԱԲՈՎՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԷԼ * 04201558

Հավելված
Հաստատված Աբովյան համայնքի
ավագանու 12.12.2017թ. 53-Ն որոշման

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 Թ-ԻՆ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ» ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական Ինքնակառավարման Մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով, ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով,

համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի <<ա>>- ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ.

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 100000 դրամ.

գ) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ.

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կաու շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ.

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի < ա> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 5000 դրամ:

4) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ:

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60000 դրամ:

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույտվության համար՝ օրացուցային տարվա համար 50000 դրամ:

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանք վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

մինչ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 25000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 45000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպման դեպքում՝ 100000 դրամ:

8) Համայնքի տարածքում՝

բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա) հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50000 դրամ:

բ) ոչ հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ:

10) Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

11) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ;

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

ե) համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ

գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 դրամ,

գ)եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 150 դրամ:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 100000 դրամ:

13). Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար սամանվում է՝ 10000 դրամ:

14. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 500000 դրամ:

15) Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Տեղական վճարներ

16) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000դրամ:

17) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ սահմանվում է՝ 10000 դրամ.

18) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 5000 դրամ:

19) Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ 1000 դրամ.

20) Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

ա) յուրաքանչյուր բնակչի համար 100 դրամ

բ)Համայնքում իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել հետևյալ սակագներով՝

1. Առևտրի(այդ թվում շուկաների) , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողներ – 50 դրամ/1քմ:
2. Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ-20 դրամ/քմ:
3. Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ -6 դրամ/քմ:
4. Դրթական,մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ - 3դրամ/քմ:

Սույն որոշումը ուժի մեջ կմտնի 2018թ-ի հունվարի 1-ից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Աբովյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Աբովյան, (098)550001, abovyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 54-Ն

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետորով.

համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել 2018 թ-ի Աբովյան համայնքի ղեկավարի աշխատավարձը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ կմտնի 2018 թ-ի հունվարի 1-ից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՇՈՏ Կողմ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ Կողմ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԴԱՎԻԹ Կողմ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԻՇԽԱՆ Կողմ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՔԱՋԻԿ Կողմ
6. ՍԱՆՈՅԱՆ ՖԻՐՈՒԶԱ Կողմ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ Կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Աբովյան
համայնքի ավագանու 2017 թվականի
դեկտեմբերի 12 թիվ 54-ն որոշման

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ __ 10
2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար			270000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	170000
Աշխատակազմի գլխավոր մասնագետ	2.3-1	1	169000
Աշխատակազմի առաջատար մասնագետ	3.1-1	1	117000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ	3.2-1	1	113500
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ			
Գեղմասվար		1	78000
ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
Համակարգչային օպերատոր		1	78000
Հավաքարար		1	72800
Պահակ		1	72800
Համայնքապետարանի վարորդ, այգեպան և կատարածու		1	78000

Ընդամենը՝ 1219100 (մեկ միլիոն երկու հարյուր տասնիններեք հազար հարյուր) հազար դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Վ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 04201558